ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՄԱՄՈՒԼԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻ ՀԱՐՑԻՆ

(2 մայիսի 1967)

ՀԱՐՑ.—Արտասահմանի մամուլից տեղեկացանք, թե մայիս ամսին Անթիլիասի Խորեն կաթողիկոսը այցելություններ է տալու դանազան եկեղեցական կենտրոններին, ինչպես՝ Վատիկան, Ժնև և Քենտրբերի։

Կկամենայի՞ք արդյոք մեզ հայտնել Ձեր կարծիքը այդ այցելության բնույթի և նպատակների մասին։

ՊԱՏԱՍԽԱՆ.—Իբրև հայ եկեղեցու գերագույն Պետ, Մենք տեղյակ չենք Խորեն Կաթողիկոսի Եվրոպա ուղևորության և ոչ էլ նրա նպատակներին։ Ցանկալի և անհրաժեշտ կլիներ, որ նման առիթով Անթիլիասի Կիլիկյան Աթոռը գործեր հայ եկեղեցու Աթոռների իրավասության սահմանների պահպանման ու միասնության ոգիով։

Համենայնդեպս, հայտնի է, թե Անթիլիաս հաստատված Կիլիկյան Կաթողիկոսությունը, հայ եկեղեցու ծոցում լինելով տեղական բնույթ կրող Աթոռ, ինչպես անցյալում, նաև այժմ չի ներկայացնում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին միջեկեղեցական հարաբերությունների մեջ։

2 ՄԱՅԻՍ 1967
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

***

Սփյուռքից էլ նախապես սույն հարցի վերաբերյալ եղան մի շարք հարցումներ, որոնց տրվեց հետևյալ պատասխանը, Մայր Աթոռի դիվանի կողմից։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կիազորված ենք այսու հայտարարելու ի պատասխան արտասահմանից Մայր Աթոռիս ուղղված հարցումներին, թե Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը որևէ տեղեկություն չունի Տանն Կիլիկիո գահակալի հանապարհորդության և այցելության մասին, հարաջիկա ամիսներին, ս. Էջմիածնի իշխանության ներքև գտնվող Եվրոպայի հայ եկեղեցիներին և համայնքներին։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
14 ԱՊՐԻԼԻ 1967

ՊԱ-8198